

պատմեն թէ այն ստեղծուալ կարգախօսը կուգար մայրաքաղաքէն, պաշտօնական գեկոյցի ձեւով, ծանուցանելով հաւանական ժամանումը յեղափոխականներու, որոնք իրեւ թէ կառավարութեան և խղամական իրաւունքներու վրայ յարձակելու նպատակ ունէին՝ և կը յանձնարարէին խղամ բնակչութիւնը անզեակ պահել այս իրողութիւններուն :

Յամաքի ճամբով մեկնած ըլլալով՝ գիշեր մը Գոնիայի մէջ անցուցինք : Վիլայէթի թահրիրաթ միւտիւրին և ստիկան-զօրաց հրամանատարը Վիլայարանը զմեզ դիմաւորած էին՝ վայրին անունով մեզի բարի եկ մաղթելու համար : Այս էֆէնտիները խօսակցութեան ընթացքին մեզի անզեկացուցին թէ միեւնոյն օրը այդ քաղաքին մէջ որչ չափով շարժումի նշաններ կը տեսնուէին, խղամները շուկայ եկած էին՝ ցղլուխ զինւած, Հայերը ապաստանած էին իրենց տուները և կամ խղամ բարեկամներու մօտ, բարերախառքար շուտ գիտցած էր որ այս շարժումին պատճառը սուտ լուր մըն էր ու այսպէսով խռովութիւններէ խուստկած էին : Անմիջապէս վայրին մօտ գացինք այս գէպքին նկարագիրը հասկնալու համար :

Անո՛ր թէ ի՛նչ էր խնդիրին էութիւնը :

Նախընթաց օր Պօզ-Քըրի (Գոնիայի գազա) գայմագամէն հեռագիր մը հասած էր որ կը հազորդէր շրջող զրոյց մը՝ որուն համաձայն 5000 Հայեր գազային մէջ մօտած՝ սկսած էին հրդեհել և աւերել զիւրիքը, և թէ խղամ բնակչութիւնը գերազրգուելով, բէտիֆներու միտերանցին մէջ զանուած գէնքերը աւարի տուած էր : Հեռագիրը կ'աւելցնէր թէ, գինուորական ուժի մը չգոյութեան պատճառով, ահգական իշխանութիւնները խղամ բնակչութիւնը կը դրկէին շրջակայ գլխաւոր գիրքերուն վրայ՝ մինչև որ հասնէին գայմագամին պահանջած օգնութիւնները :